

# «Վերածննդի հույսն ունենանք մեր մեջ»

**ՓՈՔՐԻԿ ՏԵՂԵԿԱՆՔ ՌԵԿՏՈՐԻ ՄԱՍԻՆ**

**Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ ծնվել է 1952 թվականի սեպտեմբերի 26-ին, Երեւանում: Նկարիչներ Էդվարդ Իսաբեկյանի եւ Արփենիկ Նալբանդյանի որդին է: 1976 թվականին ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը: Նույն թվից մասնակցում է հանրապետական, համամիութենական եւ արտասահմանյան ցուցահանդեսներին: Հայաստանի նկարիչների միության անդամ է, միության նախագահության գեղանկարի սեկցիայի նախագահը: 1979 թվականից դասավանդում է գեղարվեստա-թատերական (այժմ՝ գեղարվեստի պետական) ինստիտուտում: 1982 թվականին Երեւանում եւ Էջմիածնում բացվել են նկարչի ստեղծագործությունների ցուցահանդեսները:**

**Ինչպես բարձրագույն բոլոր ուսումնական հաստատություններում, այնպես էլ Գեղարվեստի Երեւանի պետական ինստիտուտում այս օրերին ընդունելության քննություններ են: Մեր թերթի աշխատակից Սերգեյ Գալոյանը զրուցեց ինստիտուտի ռեկտոր Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆԻ հետ: Բնական է, որ զրույցը ոչ միայն ընդունելության քննությունների, գեղարվեստի պետական ինստիտուտի, այլ նկարիչ-արվեստագետի աշխարհընկալման մասին ստացվեց:**

**-Պարոն Իսաբեկյան, ինչպե՞ս են ընթանում ընդունելության քննությունները ձեզ մոտ: Դիմորդը հնարավորություն ունի՞ լիովին դրսեւորել իր ունակությունները, բացահայտել շնորհները:**

-Մենք ընդունելության քննությունների անցկացման մի ուրույն կարգ ենք մշակել, եւ դրա կիրառման շնորհիվ քննությունները մեզ մոտ շատ հանգիստ են անցնում, դիմորդների համար բարենպաստ մթնոլորտում: Ի տարբերություն մյուս բարձրագույն հաստատությունների, մշակույթի բուհերում, այդ թվում՝ մեզ մոտ, քննություններն ավելի երկար են տեւում: Սակայն որպեսզի հոգնեցուցիչ մթնոլորտը վերանա, իրապես ստուգվեն բոլոր դիմորդների գիտելիքները, աշխատում ենք, որ բացահայտվեն բոլոր դիմորդների ունակությունները, եթե անգամ դա մեզանից եւ դիմորդից երկար ժամանակ խլի:

**-Ինչպիսի՞ մասնագիտացումներ կարող են ստանալ ձեզ մոտ սովորող ուսանողները:**

-Ինչպես եւ նախորդ տարիներին, մեզ մոտ գործում են գրաֆիկայի, քանդակի, գեղանկարի, արվեստաբանական, դեկորատիվ-կիրառական (կերամիկայի) բաժինները: Հինգ տարվա ընդմիջումից հետո մեզ մոտ վերաբացվել են զգեստի մոդելավորման եւ տեքստիլ արդյունաբերության ձեւավորման բաժինները: Մեզ մոտ այս տարի պետք է ընդունվի 80 երեխա, որոնցից 40-ը պետք է սովորի անվճար ուսուցմամբ: Ստացվել է 107 դիմում: Մրցույթ կա: Հաճելին այն է, որ մրցույթ կա արվեստաբանական բաժնում, այսինքն՝ այնտեղ, ուր նախորդ տարիներին դիմորդների թիվը միշտ էլ քիչ էր լինում:

**-Մի քանի տասնամյակ շարունակ, առանձին բացառությունները չհաշված, մեր արվեստաբանական եւ արվեստագիտական միտքը առանձին փայլատակումներ չի ունեցել: Դա գալիս է ուսուցման որակի՞ց, թե՞ ուրիշ պատճառներ էլ կան:**

-Հավանաբար հարցի պատասխանը որոշ չափով դուք գիտեք: Արվեստագիտական երեւույթները նախ եւ առաջ պայմանավորված են արվեստի ճշմարիտ գիտակների լինելությամբ: Իհարկե, այս իմաստով շատ բան ունի անելու նաեւ մեր ինստիտուտը: Հասկանալի է, որ արվեստագիտական բաժնում դասերը պետք է անցնեն սլայդների, կինոնկարների ցուցադրումներում: Մենք ունենք հարուստ գրադարան, սակայն զրկված ենք դրանց ցուցադրումից, որովհետեւ ինստիտուտի շենքի հոսանքամատակարարումը շատ անկանոն է: Հինգ տարի է, որ մենք այս դժվարությունները չենք կարողանում հաղթահարել: Որոշակի դժվարություններ կան նաեւ դասախոսական կազմի ընտրության գործում, որովհետեւ, ինչպես գիտեք, արվեստի մարդկանց մի մասը հեռացել է: Սակայն կարող ենք հպարտությամբ ասել, որ այսօր մեզ մոտ դասախոսում են գեղարվեստի այնպիսի ճանաչված վարպետներ, ինչպիսիք են Էդվարդ Իսաբեկյանը, Անատոլի Պապյանը, Մկրտիչ Սեդրակյանը, Սերգեյ Բաղդասարյանը, Արա Հարությունյանը, Գրիգոր Աղասյանը եւ ուրիշներ:

**-Այժմ հաճախ են խոսում արվեստի բնագավառում մեր երկրի ապրած հետընթացը: Դուք համաձա՞յն եք այսպիսի եզրակացությունների: Եթե՝ այո, ապա ինչո՞վ կբացատրեք: Ժամանակներ են եղել, երբ արվեստի մնայուն գործեր չեն ստեղծվել նաեւ այնպիսի հասարակություններում, երբ հեղափոխական ցնցումներ, պատերազմական վիճակներ, շրջափակումներ, տնտեսական դժվարություններ չեն եղել:**

-Անկախ որեւէ արտաքին միջամտությունից, արվեստի մակընթացություններ եւ տեղատվություններ եղել են: Բայց դա չպետք է երբեք բացարձականացնել: Գալիս է մի ժամանակ, երբ հոգեւոր ճգնաժամ է ստեղծվում: Դա բնական է եւ հատուկ է բոլոր ժողովուրդներին եւ բոլոր ժամանակներին: Սակայն ամեն մի ճգնաժամին հետեւում է սրընթաց վերելքը, հոգեւոր վերածնունդը: Այնպես որ, մենք այդ վերածննդի գալստյանը պետք է միշտ սպասենք: Սա գուցե դիլետանտի համար այնքան էլ պարզ չլինի, որովհետեւ նա միշտ ցանկանում է շրջապատված լինել հանճարեղ ստեղծագործողներով եւ հանճարեղ ստեղծագործություններով: Սակայն իմ ասածը լիովին հասկանալի կլինի արվեստի ճշմարիտ գիտակին եւ, հատկապես, ստեղծագործող մարդուն: Գոնե մեզ մոտ՝ Հայաստանում, արտաքին գործոնը ոչ մի դեր չի խաղացել անգամ խորհրդային ամենադաժան տարիներին: Մեր նկարիչներն ու քանդակագործները, անգամ ամենամոդեռն ուղղությունների հետեւորդները, միշտ էլ կարողացել են ցուցադրվել: Մեզ մոտ խրուշչովյան եւ ստալինյան օյինբազությունները չեն անցել, այսպես ասած, «վերեւների ճնշումը» չի զգացվել: Փառք Աստծո, այդպես է նաեւ այժմ: Հետեւապես, մենք մեր լճացումը կամ ճգնաժամը պետք է փնտրենք ինքներս մեր մեջ: Ես մեղադրանքի խոսք ունեմ հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի գործունեության վերաբերյալ: Չի կարելի սովորական դիլետանտներին կոչել շնորհալի, տաղանդավոր, անգամ՝ հանճարեղ: Արվեստի գործի գնահատման ժամանակ ձողափայտն այնքան ցածր է դրված լինում երբեմն, որ գնահատության չափանիշներն են խախտվում:

**Գեղարվեստի Երեւանի պետական ինստիտուտի ռեկտոր Արամ Իսաբեկյանի հետ զրույցի ժամանակ արվեստին, ստեղծագործողներին, ժամանակի մեջ արվեստագետի արտահայտման ձեւերի մասին շատ խոսվեց, որը, կարծում ենք, այլ նյութի թեմա է, որովհետեւ անչափ հետաքրքիր է: Մշակույթի բնագավառի մի կարեւոր օջախի ղեկավար Արամ Իսաբեկյանի կարծիքն անչափ կարեւոր պետք է լինի մշակույթի մեր գործիչների համար: Հուսով ենք, որ պատեհ առիթը կստեղծվի:**